ԷԼԼԱ ԱՎԱԳՅԱՆ

ՄԱՀՎԱՆ ԹԵՄԱՆ ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱՅԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Ավստրիացի ականավոր գրող Ֆրանց Կաֆկան իր ուրույն հետքն է թողել 20-րդ դարի ողջ համաշխարհային գրականության վրա: Լինելով Նիցշեի, Կիերկեգորի, Դոստոևսկու գաղափարների հետևորդը նա համաշխարհային գրականություն բերեց լիովին նոր նյութ և գրելաոճ: Ինչպես իր ժամանակակիցներից շատերն են նշել Կաֆկայից հետո այլևս հնարավոր չէր գրել այնպես, ինչպես գրել էին իր նախնիները, նրա վեպերը չեն հենվում, ինչպես Թոմաս Մաննինը կամ Հերմանն Հեսսեինը, դասական գրականության ավանդույթների վրա: Ֆրանց Կաֆկան իր կարճատև, բայց բովանդակալից կյանքում ստեղծեց այնպիսի արժեքներ, որոնք շուտով դարձան գոհարներ գտնելով իրենց պատվավոր տեղը համաշխարհային դասականների կողքին:

Սույն հոդվածում մեր ուսումնասիրությունը նվիրված է Ֆրանց Կաֆկայի արձակում բազմիցս արծարծված մահվան թեմային: Քաջատեղյակ լինելով անբուժելի հիվանդության մասին պրահյան գրողն իր գրեթե ողջ արձակում առանցքային է դարձնում մահվան թեման, կարծես, փորձ կատարելով հաշտեցնել միմյանց հետ կյանքը և մահը, մեղմացնել վախը մահվան առջև, նախապատրաստել հասարակ մահկանացուին վախճանի: «Դատավարություն» վեպի հերոս Յոզեֆ Կ.-ն սպանվում է իր ծննդյան նախօրեին դանակի սուր հարվածից, իսկ «Դղյակը» վեպում, ինչպես մեզ տեղեկացնում է Կաֆկայի լավագույն բարեկամ և նրա գրական ժառանգության տնօրեն Մաքս Բրոդը, վեպի հերոս Կ.-ն ուժասպառ է լինում: Մահվան են դատապարտված Կաֆկայի մյուս հերոսները «Դատավճիռ», «Կերպարանափոխություն», «Ուղղիչ գաղութում», «Որսորդ Գրակխոսը», «Եղբայրասպանություն», «Գյուղական բժիշկ» և այլ պատմվածքներում: Անգամ այն ստեղծագործություններում, որտեղ ոչ ոք չի մեռնում, կրկին զգացվում է մահվան շունչը: Ամենուրեք երևում են աղոտ, ուրվական պատկերներ գերեզմանոցներում, դամբարաններում, մահաբեր մեքենաներում, ինչպես նաև այնպիսի բնապատկերներում, որտեղ մարդը գտնվում է կյանքի և մահվան սահմանագծում: Այսպես «Երազ» պատմվածքում «Յոզեֆ Կ.-ն հազիվ էր մի

երկու քայլ գցել, երբ հասավ դերեզմանոց, ու նրա աչքին ընկան գերեզմանաքարերը»:[1]

Թեպետ մահով է վերջանում կյանքում ամեն ինչ, սակայն Կաֆկայի արձակում մահը խորհրդանշում է ոչ թե ավարտ, այլ մատնանշում է կյանք: Մահն առկա է Կաֆկայի յուրաքանչյուր պատմությունում սկզբից ևեթ: «Դատավճիռ» պատմվածքում, որով էլ հիմնականում սկսվում է Կաֆկայի դարաշրջանը, մահը ներկա է պատմվածքի հենց առաջին տեսարաններում: Գեորգ Բենդեմանը «նստած էր՝ արմունկը հենած գրասեղանին, և նայում էր սենյակի պատուհանից դուրս գետին, կամրջին և մյուս ափին վեր խոյացող կանաչ բարձունքին»,[2] նա մտածում էր ջրում խեղդվելու կամ էլ կամրջից ջուրը նետվելու մասին: Պատմվածքում գնալով էլ ավելի են շատանում մահվան մասին մտքերը՝ «երկու տարի առաջ մահացած մոր մասին»[3], «աթոռին նստած հոր մասին, որը թևերը խաչել է կրծքին»[4], «հոր սենյակի մասին, որտեղ նա ապրում է զուսպ մեռյալ մթության մեջ»:

Նմանօրինակ իրավիճակ է նկարագրված «Դատավարություն» վեպում: «Դուռը թակեցին, և ներս մտավ մի տղամարդ, որին այս բնակարանում ոչ ոք չէր տեսել՝ Նա նիհարակազմ էր, հագին ուներ սև հագուստ»:[5] Յոզեֆ Կ.-ին ձեռբակալելու եկած այդ պարոնները իրենց տեսքով մահ են հիշեցնում, նրանք մահվան լրաբերներն են: Վերջինները ստուգում են Յոզեֆ Կ.-ի գիշերային շապիկը և ասում, որ «նա հիմա պետք է է՛լ ավելի վատ շապիկ հագնի»[6]: Այս տեսարանները մեզ վեպի հենց սկզբում հուշում են պատմության ողբերգական ավարտի մասին: «Դատավարությունում» շատ են նաև ինքնասպանության մասին մտքերը:

Կաֆկայի ստեղծագործություններում մահն անսպասելիորեն չի հայտնվում: «Դատավարության» վերջին գլխում հերոսն արդեն սպասում է իր դահիճներին, թեպետ նրան մահվան դատավճիռ չի ներկայացվել: «Յոզեֆ Կ.-ն՝ սև հագնված, նստած էր բազկաթոռին՝ դռան մոտ, և հագցնում էր լարված մատներին ձեռնոցներն այնպիսի շարժումով, կարծես՝ հյուրերի էր սպասում»:[7] Կաֆկայի հերոսներն ունեն ժամանակ ծանոթանալու և հաշտվելու մահվան

---

[1] Kafka, Franz. Ein Traum. In:Romane und Erzählungen.Parkland Verlag.2000. S.747
[2] Kafka, Franz. Das Urteil. In:Romane und Erzählungen.Parkland Verlag.2000. S.839
[3] նույն տեղում էջ 841
[4] նույն տեղում էջ 842
[5] Kafka, Franz. Der Prozess. In:Romane und Erzählungen.Parkland Verlag 2000. S.431
[6] նույն տեղում էջ 434
[7] նույն տեղում էջ 700

հետ: Յոզեֆ Կ.-ն ծանոթանում է անգամ իր դահիճների հետ, որոնք նրան քաջություն են ներշնչում: «Յոզեֆ Կ.-ն ծգված, գնում էր նրանց միջև, այժմ նրանք միասին կազմել էին մի այնպիսի միասնություն, որ եթե մարդ փորձեր հարվածել նրանցից մեկին, ապա բոլոր երեքին էլ հարվածած կլիներ»:[8] Սահվան հետ պետք է անհետանան նաև բոլոր կասկածները և խնդիրները, որոնք մինչ այդ տանջում էին Յոզեֆ Կ.-ին: Մահն ազատում է նրան փակուղիներից և լաբիրինթոսներից, որոնց մեջ հայտնվել է ողջ կյանքի ընթացքում: Մոտեցող մահը պետք է շուտափույթ օգնի Յոզեֆ Կ.-ին հնարավորին չափ շուտ հասնել նպատակակետին: Ի վերջո ոչ թե դահիճներն են նրան տանում դեպի մահը, այլ ինքն է առաջնորդում վերջիններիս դեպի ոճրագործության վայր: «Կ.-ն հանկարծակի հասկացավ իր դիմադրության անիմաստությունը: Հերոսություն չէր լինի, եթե նա դիմադրեր պարոններին կյանքի ավարտից առաջ դիմադրության մեջ վերջին անգամ զգալու համար կյանքի վայելքը: Նա ընդառաջ գնաց ցանկանալով ուրախություն պատճառել պարոններին: Պարոնները թույլ տվեցին, որ Կ.-ն ինքը որոշի ոճրագործության վայրի ուղղությունը»:[9]

Սահվան մեջ են Կաֆկայի հերոսները տեսնում ելքը: Բենդեմանը գլխապատառ վազում է դեպի գետը, Զամզան մահանում է դատարկության և խաղաղության մեջ: Հանգիստ են մահանում նաև «Սոված արվեստագետը» և «Գյուղական բժիշկ» պատմվածքների հերոսները: «Ուղղիչ գաղութում» ևս հերոսներն իրենց մահկանացուն կնքում են խաղաղ, առանց բողոքի, հաշտվելով դաժան ճակատագրի հետ: Նրանց կյանքից մահվան անցումը կատարվում է մեխանիկորեն: Նրանք չեն ընկնում հոգեվարքի մեջ, ամեն ինչ կատարվում է բնականորեն, արագ և առանց բարդությունների («Օրենքի առաջ», «Սոված արվեստագետը»):

Կաֆկայի պատմություններում գրեթե միշտ առկա է սպանության նույն գործիքը դանակը: Վերջինս մի միջոց է, որն օգնում է Կաֆկային էլ ավելի հստակ ցույց տալ իր պատմությունների ոճրագործ բնույթը: Դրանով է սպանվում «Դատավարությունում» Յոզեֆ Կ.-ն: «Պարոնը հանեց կիսաբաճ-կոնին փաթաթած մսագործի սուր դանակը, բարձրացրեց դեպի վեր և լույսի ներքո ստուգեց սրությունը»: «Եղբայրասպանություն» պատմվածքում ոճրի

---

[8] նույն տեղում էջ 701

[9] Katka, Franz. Der Prozess. In:Romane und Erzählungen Parkland Verlag 2000 S 703

գործիքը կրկին դանակն է: «Նա սպանության զենքը կիսաբայոնետ, կիսախոհանոցային դանակ, պահել էր պատրաստ»:[10]

Կաֆկայի մահվան տեսարաններում առկա են նաև սերը և էրոթիկան: Գրողը ներկայացնում է այս երկուսը որպես միմյանցից անբաժանելի մասեր: Երբ Յոզեֆ Կ.-ն իր դահիճների հետ մութ փողոցներով դեպի մահն է գնում, հանդիպում է ճանապարհին «իրենց առջևով խորը ներս ընկած փողոցի նեղ աստիճաններով վեր բարձրացող օրիորդ Բյուսքներին»[11]: Մինչ ծեր բժիշկը շտապում էր հիվանդի մոտ «Գյուղական բժիշկ» պատմվածքում, նրա ծառան տեսակցում է աղախին Ռոզայի հետ: Էրոթիկ տեսարանները շատ են «Դղյակը» պատմվածքում:

Ֆրանց Կաֆկայի ստեղծագործություններում մահվան մասին խոսելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև սպանությունների կատարման տեղի և ժամանակի վրա:

Տարածական իմաստով Կաֆկայի հերոսները չեն մեռնում իրենց անկողիններում, հորիզոնական դիրքով, այլ վանդակներում, դռան շեմի մոտ, փողոցում, ջրում՝ կամրջի տակ, սպանիչ մեքենայի դաժան անիվների ներքո: Նրանք ավարտում են իրենց կյանքը միայնության մեջ՝ լքված, հաճախ արհամարհված, նրանց մահը մահ է առանց փայլի, առանց սուգի, ինչպես և իրենց կյանքն էր («Դատավարություն», «Ուղղիչ գաղութում», «Կերպարանափոխություն»):

Հերոսների ճակատագրերը վճռվում են կամ գիշերներին, կամ էլ մթության մեջ: Գործողությունները սկսվում են գիշերվանից առաջ կամ հետո: Այս ամենը մի հնարք է, որով գրողը նախապատրաստում է ընթերցողին հետագա գործողությունների ողբերգական ընթացքին և ավարտին: Գեորգ Զամզան և Յոզեֆ Կ.-ն չեն հասցնում լուսացնել գիշերը: «Դատավարությունը» սկսվում է գիշերվա ավարտով և ավարտվում գիշերվա սկզբով: «Ինչ-որ մեկը զրպարտել էր Յոզեֆ Կ.ին, քանի որ նա ոչ մի վատ արարք չէր գործել և ձեռբակալվեց մի առավոտյան»:[12] «Իր 31-ամյակի նախօրեին երեկոյան ժամը 9-ի կողմերը, երբ փողոցներում արդեն լռություն էր տիրում, Յոզեֆ Կ.-ի բնակարան մտան երկու պարոններ»:[13] «Դղյակում» նույնպես ամեն ինչ սկսվում և ավարտվում է մթության մեջ: Հողաչափ Կ.-ն դղյակ է հասնում ուշ երեկոյան: «Ուշ երեկո էր, երբ Կ.-ն ժամանեց: Դղյակի բարձունքից ոչինչ չէր

---

[10] Kafka, Franz. Ein Brudermord In:Romane und Erzählungen Parkland Verlag.2000. S.744
[11] Kafka, Franz. Der Prozess. In:Romane und Erzählungen Parkland Verlag.2000. S.702
[12] Kafka, Franz. Der Prozess. In:Romane und Erzählungen Parkland Verlag.2000. S.431
[13] Նույն տեղում էջ 700

երևում, միայն մառախուղ էր և մթություն»:[14] Վեպի վերջին տեսարանը նույնպես ավարտվում է երեկոյան մթնշաղին: «Երբ Կ.-ն արթնացավ, նրան թվաց, թե նա չէր էլ քնել. սենյակը դատարկ էր, տաք, բոլոր պատուհանները մթության մեջ, լուսամփոփը՝ հանգած, պատուհաններից այն կողմ գիշեր էր»:[15] «Կերպարանափոխություն» պատմվածքում էլ ամեն ինչ սկսվում է մի առավոտ գիշերից հետո: «Երբ Գեորգ Զամզան արթնացավ անհանգիստ քնից, գտավ իրեն՝ անճոռնի միջատի կերպարանափոխված»:[16] Այս տարօրինակ պատմությունն ավարտվում է մթության մեջ: «Իսկ հիմա՞,- հարցրեց ինքն իրեն Գեորգը և նայեց շուրջը՝ մթության մեջ: Նա շուտով հասկացավ, որ այլևս չի կարողանում շարժվել:»[17]

Կաֆկայի արձակում մահը ներկայանում է տարբեր տեսքերով՝ որպես պստիժ «Դատավարությունում», «Դատավճռում», ելք՝ «Կերպարանափոխությունում», մղձավանջ «Կամրջում», կարոտի իրականացում «Երազում», բախում ատելության հետ՝ «Եղբայրասպանությունում»: Այս ամենը, միմյանց լրացնելով և իրար բացառելով, մեզ է ներկայացնում այն բազմազանությունը, որը թույլ է տալիս դատողություններ անել և իմանալ ճշմարտությունն իրական կյանքի և մահվան մասին: Ըստ Կաֆկայի՝ ոչ թե կյանքը, այլ մահն է առաջացնում վստահություն: Նա իր նամակներից մեկում Բրոդին գրում է, որ կյանքում մահից բացի նա ոչ ոքի չի կարող լիովին վստահել: Այս ամենը Կաֆկայի համար հանդիսանում են միջոց հաշտվելու մոտալուտ մահվան հետ: Մահվան մասին խոսելիս նա «Որսորդ Գրակխոսը» պատմվածքում գրում է. «Ես հաճույքով ապրեցի և հաճույքով մահացա: Ես հագա իմ մահվան շապիկը՝ ինչպես հարսանեկան զգեստ»:[18]

---

[14] Kafka, Franz. Das Schloss. In:Romane und Erzählungen.Parkland Verlag.2000. S.11
[15] Նույն տեղում էջ 391
[16] Kafka, Franz. Die Verwandlung. In:Romane und Erzählungen.Parkland Verlag.2000. S.763
[17] Նույն տեղում էջ 832
[18] Kafka, Franz. Der Jäger Gracchus. In:Der Prozess und andere Erzählungen. Kometverlag. 2000. S.264.